ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

9 օգոստոսի 2016 թվականի **թիվ 104** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. Համաձայնել Ղազախստանի Հանրապետության եւ Ղրղզստանի Հանրապետության կողմից «Երկաթուղային տրանսպորտի ծառայությունների հասանելիության, ներառյալ՝ սակագնային քաղաքականության հիմունքների կարգավորման մասին» կարգի («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 24 հավելվածի թիվ 2 հավելված) դրույթների կիրառման վերաբերյալ ղազախական եւ ղրղզական կողմերի առաջարկին, այդ թվում՝ տարանցման կարգով Ղազախստանի Հանրապետության տարածքով Ղրղզստանի Հանրապետություն (Ղրղզստանի Հանրապետությունից) երկաթուղային տրանսպորտով փոխադրվող բեռների նկատմամբ միասնականացված սակագների մասով երկկողմ համաձայնագիր կնքելու միջոցով, որը ժամանակավորապես կիրառվելու է դրա ստորագրման օրվանից՝ ելնելով այն բանից, որ այդ համաձայնագիրը չպետք է ազդեցություն ունենա «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով նախատեսված՝ Եվրասիական տնտեսական միության այլ անդամ պետությունների կողմից իրավունքների կիրառման վրա կամ դրանց կողմից իրենց պարտականությունները կատարելու վրա։

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝
Վ. Գաբրիելյան	Վ. Մատյուշեւսկի	Բ. Սագինտաեւ	Օ. Պանկրատով	Ի. Շուվալով